

# **ՀԱՅՈՅ ՀՆԱԳՈՅՆ ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԱՏԿԵՐԱՑՈՒՄՆԵՐԸ ՎԱՍԻԼ ԴԻԳԵՆԻՍ ԱԿՐԻՏԱՍԻ ՄԱՍԻՆ ԲԻՒԶԱՆԴԱԿԱՆ ԴԻՑԱՎԵՊՈՒՄ**

Ինչպէս այլ առիթով ցոյց էր տրուել, Հայկեան օրացոյցից առաջ, հնարաւոր է նաև որոշ ժամանակ դրան զուգահեռ Հայստանում կիրառուել է բաւական իւրօրինակ ներքին կառուցուածքով «Նախահայկեան» օրացոյցը<sup>1</sup>: Թէպէտ այս օրացոյցը անմիջական կիրառութեամբ մեզ չի հասել, այդուհանդերձ դրա դոյութեան հետքերը մեզ են հասել շատ աւելի ուշ ժամանակների մշակութային իրողութիւնների մէջ պահպանուած:

Հայկական հնագոյն օրացուցային պատկերացումների մասին դիտենք, որ ըստ այսպէս կոչուած «Նախահայկեան» օրացոյցի, տարի է համարուել միայն այն ժամանակահատուածը, որի ընթացքում դիշերային երկնքում երեւացել է Հայկն (Orion) համաստեղութեան առաջնորդ աստղը: Այս միջոցը տեւել է 300 օր: Մնացեալ ժամանակը (60-66 օր) համարուել է տարուց դուրսդա եղել է արդելքների շրջան: Համարուել է, որ այդ ընթացքում դլիսաւոր պաշտուող է ակը՝ Հայր Աստուած եղել է Անդրաշխարհում: Այդ շրջանում արդելուած են եղել մի շարք գործողութիւններ, այդ թվում՝ եւ ամուսնութիւնը: Այս արտատարեկան օրերից յետոյ Ամանորի տօնակատարութեամբ սկսուել է նոր տարին: Ամանորի տօնակատարութեան մէջ դլիսաւոր տօնը ձօնուած է եղել Հայկին-Հայր Աստծուն. նշուել է նրա ելքը Անդրաշխարհից: Տարեմուտի դիրքը համապատասխանել է մեր

<sup>1</sup> ԲՐՈՒՏԵԱՆ ԳՐԻԳՈՐ, Հայոց Տոմարի Որոշ Հարցերի Մասին. Նախահայկեան Օրացոյցի Կառուցուածքը, «Էջմիածին», ԺԲ, 1996, էջ 135-164: Խոյնը առե՛ս նաև ԲՐՈՒՏԵԱՆ ԳՐԻԳՈՐ, Օրացոյց Հայոց, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1997 գրքում, էջ 385-433:

արդի օրացոյցի Յունիսի 14-ին: Իսկ արգելքների շրջանն էլ սկսուել է մեր օրացոյցով՝ մօտաւորապէս Ապրիլի 5-ին<sup>2</sup>: Նկատենք նաեւ, որ Նախաճայիկեան օրացոյցի այսպիսի կառուցուածքը, իբր օրացուցային պատկերացումների համակարգ, արտացոլուած է Գ-Դ. դարերի սահմանին Հայոց դարձի հետ կապուած դէպքերի նկարագրութեան մէջ<sup>3</sup>:

Այս օրացոյցի կառուցուածքի տարբեր տարբեր պահպանուել եւ մեզ են հասել հայկական տոմարի եւ դրան առնչուող այլ հարցերի մասին գրած է-ժԴ. դարերի հայ հեղինակների երկերում<sup>4</sup>: Պարզուում է, որ Հայոց Նախաճայիկեան օրացոյցի կառուցուածքն արտացոլուած է նաեւ Վասիլ Դիգենիս Ակրիտասի մասին բիւզանդական դիցավիճակում:

Վասիլ Դիգենիս Ակրիտասի մասին դիցավիճակը ստեղծուել է Թ-Ժ. դարերում Բիւզանդական կայսրութեան արեւելեան հատուածներում: Վէպի գործողութիւնները կատարուում են Բիւզանդիայի եւ Արաբական Խալիֆայութեան սահմանային տարածքներում, որոնք այդ ժամանակ բնակեցուած էին պաւլիկեան աղանդաւորներով, իսկ մինչեւ Թ. դարի կէսերը նաեւ գտնուում էին այդ աղանդաւորների իշխանութեան տակ: Ինչպէս նշուած է տարբեր հետազօտողների կողմից<sup>5</sup>, այս վէպը ստեղծուել է հայկական աղանդաւորական միջավայրում: այդ ժամանակներում Բիւզանդիայի արեւելեան հատուածի մէջ էին մտնում Մեծ Հայքի համարեա կէսը, Փոքր Հայքը ամբողջովին եւ էլի որոշ այլ հայկական տարածքները: Նշենք, որ այս տարածքները իրենց բնիկ հոծ հայ բնակչութիւնը պահպանել էին ընդհուպ մինչեւ 1915 թ. Մեծ Եղեռնը: Բնական է, որ հայկական (թէկուզել՝ ար-

<sup>2</sup> Այս մասին մանրամասն տե՛ս ԲՐՈՒՏԵԱՆ ԳՐ., նշ. աշխ. էջ 416-433:

<sup>3</sup> Մանրամասն այս մասին տե՛ս ԲՐՈՒՏԵԱՆ ԳՐ., Հայոց հնագոյն օրացուցային պատկերացումները ըստ Ազարանգեղոսի «Հայոց պատմութեան», «Էջմիածին», Զ, 1998, էջ 45-53:

<sup>4</sup> ՏԵ՛ս ԲՐՈՒՏԵԱՆ ԳՐ., «Էջմիածին», ԺԲ, 1996, էջ 135-164: Նոյնը տե՛ս նաեւ ԲՐՈՒՏԵԱՆ ԳՐ., Օրացոյց Հայոց, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1997 գրքում, էջ 385-433:

<sup>5</sup> ՏԵ՛ս ՎԱՍԻԼ, «Դիգենիս Ակրիտան թարգմանութիւն, ուսումնասիրութիւն ծանօթագրութիւններ Հրաչ Բարբիկեանի, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1978 գրքում, էջ 173-188, ու նաեւ՝ այնտեղ նշուած գրականութիւնը:

զանդաւորական) միջավայրը, անկախ բիւզանդական պետականութեան պայմաններից, պիտի իր որոշ կնիքը թողած լինէր այս դիցավիճակի վրայ. Բանասէրներն այս հարցին անդրադարձել են տարբեր առիթներով (տե՛ս վէպի Հայերէն թարգմանութեան ուսումնասիրութեան բաժնում): Նշուել են բիւզանդական վէպում տեղ գտած բազմաթիւ իրողութիւններ, որ սերտ աղերսներ ունեն այլ վէպը ծնող հայ միջավայրի հետ: Այդուհանդերձ, մի շատ էական ընդհանրութիւն տակաւին քննութեան չի առնուել: Խօսքը վերաբերում է հայկական հնագոյն օրացուցային պատկերացումներին, որ առկայ են այստեղ: Նշածս օրացուցային ընդհանրութիւնները մեզ են հասել ոչ թէ վէպի բուն շարադրանքում<sup>6</sup>, այլ վէպից առանձին պահպանուած, այսպէս կոչուած՝ «Ակրիտեան երգերում»: Այս երգերը տեղ չեն գտել վէպի հայերէն թարգմանութեան մէջ, թերեւս այն պատճառով, որ դրանք վէպից անկախ ինքնուրոյն ստեղծագործութիւններ են: Սակայն, այս երգերը թէ՛ գաղափարով, թէ՛ բովանդակութեամբ, եւ թէ՛ իրենց ոգով լիովին շաղկապուած են վէպին եւ դեռ որոշ կէտերում նոյնիսկ լրացնում են այն: Որքան ինձ յայտնի է, սրանք տակաւին հայերէն թարգմանուած չեն, ուստի եւ այստեղ կը տամ դրանց հայերէն թարգմանութիւնը, որ կատարել եմ ոռուերէն հրատարակութիւնից:

## Կախարդուած Եղերուն

Երեքշաբթի պիտի մեռնի Դիգենիսը, ինչպէս կրեքշաբթի ել ծնուել էր:

Կանչում է նա բարեկամներին իր և բազերին է կանչում:

**6** Խօսքը վերաբերում է Վէպի Անդրոսի չափածոյ տարբերակին, որն էլ հէնց Հայերէն է թարգմանուած: Վէպի միւս տարբերակները ինձ մատչելի չինելու պատճառով, դրանց մասին նոյնը պնդել չեմ կարող: Այդուշանդերձ, նկատի ունենալով, որ այս տարբերակը ամենաընդարձակն ու լիւն է, կարբելի է մտածել, որ միւս տարբերակներում եւս պիտի բացակայեն այն մանրամասները, որոնց մասին խօսք կը լինի ստորեւ:

<sup>7</sup> *Σένι Греческие народные песни, предисловие Янниса Ставридиса, Комментарии Владимира Нейштадта, Гос. Изд. Худ. Литературы, Москва, 1957, *чтвртъц*, 50 15-17:*

Դրակոսի որդուն կանչեց, Մինասին, Մաւրալիսին:

—Տրեմանտաքիլոսը թող գայ, որի առաջ ողջ աշխարհն է դողում:

Եկան բարեկամները, իսկ նա պառկած է, պառկած՝ դաշտում անոյժ,

—Քեզ ի՞նչ է եղել, Դիգենի՛ս, ի՞նչ է, մեռնե՞լ ես պատրաստում:

—Բարի գալուստ, բարեկամնե՛ր, նստէ՛ք, կերէ՛ք, խմէ՛ք,

իսկ ես արդ ձեզ կը զրուցեմ, թէ ի՞նչ եղաւ, ի՞նչ պատահեց: Ալամանից անդին, լեռների մէջ, Արարական կիրճում,

Ուր կարելի չէ անցնել հինգ հոգու, առաւել եւս՝ տափին,

ես մէն-մենակ անցայ մի կերպ, անցայ հետիոտն, զենքներով:

Վարսուներկու առիւծների ըսպանեցի եւ արջերի՝ երեխա-

րիւր

Եւ մեղքն այստեղ ինձ գայթակղեց. Եղեկրուին ես զարկեցի:

Խաչ կար նրա եղիւրներին, եւ նակատին ասող էր վառուս, իսկ եղերուի թիկնամէջին Աստուածամայրն էր ցոլանում:

Հովանաւոր ուներ այդ եղերուն, սակայն մեղքն ինձ մոլորեց-

ուց

Եւ արդ, ես պէտք է մահանամ, հրաժեշտ տամ կեանիին պիտի:

Այս աշխարհում ես ապրեցի ուղիղ երեխարիւր տարի

Եւ երբեւէ, եւ երբեւէ չեմ վախեցել կեանում:

Սակայն այստեղ տեսայ մէկին. հետիոտն էր նա ոտարորիկ,

Խայտարդէտ էր հանց լուսան եւ աչքերը՝ երկու փայլակների

մման:

Հենց որ նրան ես նայեցի, սիրտս խոցուեց իսկոյն,

Եւ հասկացայ. մեծ է մեղքն ի՞մ ես պէտք է մահանամ:

## Դիգենիսի մահը

Սիս մեռնում է Դիգենիսը, երկիրն է դողում երկիւղից,

Երկինքը դողդողում, փայլատակում է, դողով է բռնուած աշխարհն արար,

Բացւում է Սամբարամետը, եւ նոնչում են հիմքերն աշխարհի:

Դողում է սալաքարը ծանր. ի՞նչպէս պիտ հերոսին ծածկի,

ի՞նչպէս պիտ դիւցազնին ծածկի՝ լաւագոյնին ողջ աշխարհի:

Նեղ էր գալիս դիւցազնին տունն. ու անձաւներն էին նեղ.

Նա լեռներով քայլում էր սէգ, գագաթները ցատկում-անցնում,

Ժայռեր ահագին նետում հանց գնդակ, եւ տեղահան անում ողջ լեռներ:

Նա երկներում հաւք էր բռնում՝ վեր ցատկելով մինչեւ ամպեր, Քարայծներ էր բռնում վազքում, եղբերուներ արագառու:

Նրան Քարոնը նախանձե՛ց, զարկե՛ց դարանակալ

Եւ արի սիրող խոցելով՝ տարաւ հերոսի հոգին:

**Այս երկու երգում էլ Դիգենիսի մահը պատկերուած է, որպէս տիեզերական մեծախորհուրդ իրադարձութիւն. «դողով է բռնուած աշխարհն արար»: Նշանակում է Դիգենիսը տիեզերական հերոս է: Եւ բնական է ակնկալել, որ նրա ինչպէս մահը, այնպէս էլ կեանքը ներդաշնակ լինեն Տիեզերքին, դրա շարժմանը, դրա օրինաչափութիւններին, այսինքն՝ Տիեզերքի մասին մարդկային պատկերացումներին: Իսկ այդ պատկերացումների ամենախոր արմատներից է գալիս նաև օրացոյցը:**

**Այժմ տեսնենք, թէ ինչպէս է Նախահայկեան օրացոյցն արտացոլուած վերը բերուած Ակրիտեան երգերում:**

Առաջինը, որ ամենաակնառուն է, Դիգենիսի կեանքի տեւողութիւնն է: Նա, իր իսկ խոստովանութեամբ, ապրել է 300 տարի: Նշենք, որ վէպի՝ այսպէս կոչուած՝ Անդրոսի չափածոյ տարբերակում Դիգենիսը մահանում է 33 տարեկանում<sup>8</sup>: Սակայն նկատենք, որ նախ Ակրիտեան երգերը համարում են աւելի վաղ յօրինուած, քան ամբողջական շարադրուած չափածոյ վէպը, որով եւ այդ երգերի տուեալները աւելի հարազատ ու նախնական պիտի լինեն եւ աւելի մօս՝ իրենց ակունքներին: Բացի այդ, այս 33-ը զուգադիպում է Քրիստոսի տարիքին, որով չի բացառում, որ դա լինի քրիստոնեայ խմբագրողի արած փոփոխութեան արդիւնքը: Եւ, ի վերջոյ, այս 33-ը բնաւ չի հակասում 300-ին: Մրանք երկուսն էլ 3-ի պատիկ թուեր են, երկուսն էլ 3-ի խորհուրդն են կըում, եւ կարելի է դրանցից մէկը դիտել իբր միւսի տարբերակ: Արդ, նրա կեանքի տարիների 300 թիւը ճշգրիտ համընկնում է Նախահայկեան օրացոյցի տարուայ օրերի

<sup>8</sup> ՏԵ՛՛ ՎԱՍԻԼ ԴԻԳԵՆԻՍԻ ԱԿՐԻՏԱՆ, ասք չորրորդ, էջ 49, տուն 1299, տե՛՛ նաև՝ նոյն տեղում էջ 171:

**Թուրին:** Այս զուգադիպումը բնաւ պատահական չէ: Դիգենիսը տիեզերական հերոս է, եւ նրա կեանքի ժամանակն էլ լրիւ ներդաշնակ պիտի լինի տիեզերական ժամանակների թուրին: Եւ, քանի որ տարին ժամանակային մէկ ամբողջական փակ շրջան է, մարդու կեանքն էլ զուգահեռ է դրում հէնց տարուն: Հստայամ, բնական է, որ տարուայ օրերի թիւը համընկնի կեանքի տարիների թուրին:

Երկրորդ «զարմանալի» զուգադիպումը Դիգենիսի որսացած կենդանիների թուերն են: Նա յայտնում է, որ սպանել է 300 արջ եւ 62 առիւծ: Այստեղ եւս՝ 300 սպանուած արջերը համապատասխանում են տարուայ 300 օրերին: Իսկ 62 առիւծներն էլ պիտի համապատասխանեն տարուց դուրս եղած 60-66 օրերին: Ուշագրաւ է, որ տարեշրջանի երկու տարբեր (իրար հակառակ) հատուածներին համապատասխանեցուած կենդանիներն էլ տարբեր, նոյնիսկ՝ հակառակ են իրենց կրած խորհուրդներով: Առիւծը, իբր Արեւի նշանակ, զուգահեռը, խորհրդանին է ցերեկուայ, Լոյս Աշխարհի: Իսկ արջը, իբր գիշերուայ խորհրդանիշ, զուգահեռ-նշանակն է գիշերի, Մութ Աշխարհի:

Ընդհանրապէս, առիւծն ու արջը յաճախ են միասին հանդէս դալիս դիցաբանական պատկերացումներում: Գազանների այս զոյտը առկայ է հայկական ժողովրդական բազմաթիւ հէքեաթներում (յաճախ՝ նաեւ այլ կենդանիների հետ): Այս զոյտը կայ եւ հէնց Ակրիտասի մասին վէպի տարբեր հատուածներում ու նաեւ աստուածաշնչեան (հին հրէական եւ քրիստոնէական) պատկերացումներում (Ա թագաւոր. Ժէ, 37, Դան. է, 4-5): Իսկ մի տեղ էլ առիւծ-արջ զոյտի փոխարէն ունենք առիւծ-գայլ զոյտը (Առակ., Իլ, 15): Ի դէպ, այստեղ արջը գայլով փոխարինուած լինելը յուշում է, որ ի դէմս արջի ունենք մի կենդանի, որ իր կրած խորհուրդով համարժէք է (առնուազն՝ շատ մօտ է) դայլին: Իսկ վերջինիս գիշերային լինելն էլ (Մութ Աշխարհի նշանակ լինելը) անկասկած է: Անդրաշխարհի հետ արջի կապը վկայուած է նաեւ նորկտակարանային աւանդոյթում: Այսպէս, Յովհաննէսի Յայտնութեան մէջ առիւծ-արջ զոյտի միջեւ դերաբաշխումն այնպէս է, որ արջը համապատասխանեցուած է ստորին աշխարհին. «Եւ այն գազանը, որին տեսայ, նման էր յովագի, իսկ նրա ոտքերը նման էին արջի ոտքերի, եւ նրա քերանը՝ առիւծի քերանի» (Յայտն., ԺԳ, 2): Այստեղ էլ արջին համապատասխանական համապատասխանական ժամանակակից է առիւծի ամբողջական ժամանակակից:

մապատասխանեցուած են ոտները (իմա' ստորին մասը՝ Անդրաշխարհը), իսկ առիւծին՝ բերանը (իմա' գլուխը, վերին մասը՝ Լոյս Աշխարհը):

Տեսնում ենք, որ, ինչպէս տարեշրջանի երկու հատուածներն են իրար հակառակ իրենց գաղափարական բովանդակութեամբ, այնպէս էլ այս երգերում դրանց համապատասխանեցուած կենդանիներն են հակառակ՝ իրենց կրած խորհուրդներով։ Այստեղ մի փոքր դժուարութիւն է յարուցում միայն այն, որ տարրուայ 300 օրերին (Լոյս Աշխարհին, ցերեկին) համապատասխանեցուած է արջը (գիշերուայ, Մութ Աշխարհի կենդանին), իսկ արտատարեկան 60-66 օրերին էլ (Մութ Աշխարհին, գիշերին) համապատասխանեցուած է առիւծը (ցերեկուայ, Արեւի, Լոյս Աշխարհի կենդանին):

Այս հակադարձ համապատասխանութիւնը կարելի է բացարել կամ ենթադրելով, որ տեղի ունի դիցաբանական պատկերացումների մէջ համապատասխանութիւնների շրջման երեւոյթ, եւ կամ էլ՝ ընդունելով, որ երգի՝ մեզ հասած տարբերակում պարզապէս փոխս են գցուած կենդանիների տեղերը՝ գուտ ի հետեւանք վրիպակի կամ աղաւաղման։ Աւելի հաւանական է այս երկրորդ տարբերակը. բանն այն է, որ երգի մէջ խօսւում է նախ առիւծների եւ դրանից յետոյ միայն արջերի մասին։ Իսկ նախահայկեան օրացոյցի կառուցուածքից դիտենք, որ տարեշրջանի սկզբում եղել են Լոյս Աշխարհին վերաբերող 300 օրերը եւ դրանցից յետոյ միայն Անդրաշխարհին վերաբերող արտատարեկան 60-66 օրերը<sup>9</sup>։ Ամէն դէպքում, այս հակադարձ համապատասխանութիւնը չի խանգարում այդ երկու իրողութիւնների միջեւ առկայ կապը ընդունելուն։

Դիգենիսի կեանքը տարեշրջանին գուգահեռ լինելը երեւում է նաեւ նրա ծննդեան ու մահուան օրերը համընկնելուց։ «Երեքշարքի պիտի մեռնի Դիգենիսը, ինչպէս երեքշարքի էլ ծըն-

<sup>9</sup> Հստ այսմ սպասելի է, որ վէպում նախապէս եղած լինէր 300 առիւծներ եւ 62 արջեր։ Կարելի է ենթադրել, նոյնիսկ, որ արջերի ու առիւծների թուերը իրար հետ շփոթուել են ի հետեւանք այն բանի, որ ընդհանրապէս առիւծներն աւելի սակաւաթիւ են քան արջերը, եւ վէպի արտագրողիմբագրողը կարող էր սիսալ համարել 300 առիւծ սպանելը ու «շտկէր» շարագրանքը, դարձնելով այն աւելի տրամաբանական։

ւել էր»: Ինչպէս գիտենք, տարեշրջանը պարունակում է 52 եօթնօրեայ շաբաթ եւ մէկ լրացուցիչ օր ( $52 \times 7 + 1 = 365$ ): Այսինքն, տարուայ առաջին ու վերջին օրերը եօթնօրեակի միեւնոյն օրն են լինում, տարեշրջանը սկսում եւ աւարտում է շաբաթուայ միեւնոյն օրով: Դիգենիսի կեանքն էլ սկսուել ու աւարտում է միեւնոյն օրով: Ըստ այսմ Դիգենիսի կեանքը զուգահեռ-ներդաշնակ է տարեշրջանին՝ վերջինիս պարունակած «տարեկան» եւ արտատարեկան օրերով:

Անցնենք առաջ: Յաջորդ ցայտուն ընդհանրութիւնը եղջերուն է: Դիգենիսի կեանքը իր լրմանն է հասնում եղջերուին հանդիպելիս: Ի՞նչ եղջերու է սա<sup>10</sup>: Ինչպէս գիտենք, Հայոց հնագոյն պատկերացումներում Հայր Աստուծոյ նշանակ-կենդանին եղել է հէնց եղջերուն: Սրանից էլ դալիս է այն, որ Հայր Աստուծոյ որդին՝ Յիսուսը հայկական (եւ ոչ միայն հայկական) զարդարուեստում յաճախ պատկերուել է իբր եղջերուածագ: Նախահայկեան օրացոյցում էլ ունենք, որ տարեշրջանի աւարտին, այսինքն՝ արտատարեկան օրերից յետոյ (կամ դրանց վերջում) տօնուել է Ամանորի տօնը, որ ճօնուած է եղել Հայկին-Հայր Աստծուն: Բացի այդ, միջնադարեան հայկական օրացոյցներում էլ տարուց յետոյ դրուող (տարուց դուրս համարուած) 5 յաւելեալ օրերից մէկը կոչուել է հէնց Եղջերու: Այս 5 յաւելեալ օրերը (աւելիք, աւելեաց օրեր) միջնադարեան հայկական օրացոյցում համարուել են արարչութեան օրեր, այսինքն, օրեր՝ կապուած Արարչի, նրա աշխարհաստեղծ գործունէութեան հետ եւ համարուել են տարուց դուրս: Ուրեմն, Եղջերու օրն էլ եղել է տարուց դուրս եւ կապուած է եղել Արարչի՝ Հայր Աստուծոյ հետ: Ըստ այսմ, եղջերուին հանդիպելը պիտի նշանակի վերջացրած լինել տարիին ու տարեշրջանը եւ կանգնել Արարչին դէմ յանդիման (զուգահեռ է վերջին դատաստանին, երբ կեանքի (աշխարհի) վերջում բոլորը պիտի կանգնեն իրենց Արարչի առաջ եւ Աստուծուած պիտի քննի ու դատի բոլորին): Այսինքն, երբ Դիգենիսը աւարտում է իր կեանքի երկու շրջանները (300 եւ 62 (60-66) կենդանիներ-տարեշրջանի օրերը), բնական է, որ դրանից յետոյ

<sup>10</sup> Դիցարանական եղջերուի մասին ընդարձակ տե՛ս ՄԱՍԱԿԱՆՆԵԱՆ ԱՍՏՈՒՐԻ, Դիցարանական-Եղջերուն միջնադարեան հայ արուեստում, Բանքեր Մատենադարանի, 12, 1977, էջ 7-49: ՏԵ՛ս նաև ԲՐՈՒՏԵԱՆ ԳՐԻԳՈՐ, Օրացոյց Հայոց, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1997, էջ 184-189:

նա պիտի կանգնի իր Արարչի առաջ, որի նշանակն էլ այստեղ եղերուն է: Եղերուին հանդիպելը արդէն իսկ նշանակում է տարեշրջանը (ուրեմն՝ եւ կեանքը) աւարտած լինել: Այսինքն, տեսնում ենք, որ առիւծներն ու արջերը սպանելուց յետոյ Դիցենիսի՝ եղերուին հանդիպելը լրիւ ներդաշնակ է նախահայկեան օրացոյցի հետ կապուած պատկերացումներին:

Դիցենիսը պատմում է, որ եղերուի «ճակատին աստղ եր վառում»: Եւ, բացի այդ, «խաչ կար նրա եղիւրներին»: Այսինչ խաչ ու աստղ են, որ կապուած են եղերուի հետ: Ցիշենք, որ եղերուն Հայկի-Հայր Աստուծոյ նշանակ կենդանին է<sup>11</sup>: Հստակամ, եղերուի ճակատին վառուող աստղը շատ լիշեցնում է Հայկն համաստեղութեան առաջնորդ աստղին՝ ա Հայկի (α Οριονίς-βετελգեյզէ), որ աւանդաբար նոյնացուած է եղել Հայկի աջուսին, աջ թեւին եւ եղել է Հայոց հնագոյն օրացոյցի ուղեցոյցն ու առաջնորդը երկար հազարամեակներ: Այս աստղի առաջին առաւօտեան ծագումով է որոշուել հին Հայոց գլխաւոր տօնի՝ Տարեմուտի օրը: Այսինքն, կարելի է համարել, որ եղերուի ճակատի աստղը հինց Հայկի-Հայր Աստուծոյ առաջնորդ աստղն է: Հնդ որում, այստեղ աստղի համար ասուած է: «Հառուում էր»: Սա էլ լիովին ներդաշնակ է ա Հայկի աստղն՝ գոյնին, որ այսօր էլ գիշերային երկնքում «վառուում է» կարմիր-նարնջագոյն փայլով (բնական է, այլ գոյնի, ասենք՝ կապոյտ կամ սպիտակ աստղի համար դժուար կը լինէր ասել. «վառուում է»):

Գալով եղերուի մէջքի խաչին, այստեղ կարելի է մէկից աւելի բացատրութիւններ առաջարկել: Հստ իս, շատ յարմար է հետեւեալը: Հայկն համաստեղութիւնը ինքը դուրս է կենդանաշրջանից ու նաեւ կից է գրան: Իր վերին մասով (գլխով) այս աստեղատունը դիպչում է ծով եւ երկուորեակներ կենդանակերպին: Բացի այդ, Հայկը նաեւ հայրն է ամիսների, այսինքն՝ կենդանակերպերի, որով եւ գերագոյն իշխանաւորը-տնօրէնն է աշխարհի, ժամանակի: Եւ այս պատկերն էլ ներդաշնակ, զուգահեռ է այն պատկերացմանը, ըստ որի Արարիչն ինքը դուր է այս աշխարհից եւ միաժամանակ տնօրինողն է աշխարհի ողջ անցուղարձի: Արդ, ըստ այս պատկերացումների ունենք, որ Հայկը-Հայր Աստուծը իր գլխի վերեւում ունի կենդանաշրջանը,

<sup>11</sup> ՏԵ՛՛ ԲՐՈՒՏԵԱՆ ԳՐԻԳՈՐ, ԽՀ. աշխ. էջ:

այսինքն, ողջ աշխարհը։ Ահա, սրան զուգահեռ՝ Ակրիտեան երգում էլ ասում է, որ եղջերուի եղջիւրներին խաչ կար։ Եղջիւրներին, այսինքն՝ գլխից վերեւ ու նաեւ՝ գլխին կպած։ Եթէ հիմա յիշենք, որ խաչը (յատկապէս՝ հաւասարաթեւ խաչը) ի թիւս բազում այլ նշանակութիւնների, որպէս նախնական բովանդակութիւն, նշանակում է նաեւ աշխարհը (աշխարհն իր չորս կողմերով), եղջերուի եղջիւրների միջի խաչը կարելի է դիտել իրը նշանակն աշխարհի եւ կենդանաշրջանի։ Ըստ այսմ, Դիգենիսի եղջերուն լրիւ ներդաշնակ կը դառնայ Հայկին-Հայր Աստծուն, նրա ճակատի աստղը՝ Հայկի գլխաւոր աստղին, իսկ եղջիւրների խաչն էլ՝ կենդանաշրջանին եւ ողջ աշխարհին։

Եղջերուի նկարագրութեան վերջին տարրը թիկնամէջին նստած Աստուածամայրն է։ Սա աւելի քան ներդաշնակ է այս եղջերուի մասին վերը մեր կազմած պատկերացմանը։ Իրօք, եղջերուի թիկնամէջին ցոլացող Աստուածամայրը, որ նոյն Սուրբ Կոյսն է, լրիւ զուգահեռ է Յուլ դարձած Հայր Զեւսին եւ նրա թիկունքին նստած կոյս Եւրոպային։ Յունական դիցաբանութեան մէջ Հայր Զեւսի մէջքին բազմածը այն կոյսն է, որ յետոյ Հայր Զեւսի որդիներին պիտի ծնի։ Ակրիտեան երգում էլ ունենք եղջերուի մէջքին բազմած Աստուածանին, որ էլի կոյս է եւ Աստուածորդու մայրը։ Ուրեմն, եղջերուն էլ հենց ինքը՝ Հայր Աստուածն է (զուգահեռը Հայր Զեւսի)։ Այսինքն, եղջերուի թիկնամէջին նստած Աստուածամայրն էլ դարձեալ ցոյց է տալիս, որ եղջերուն այստեղ նշանակն է Հայր Աստուծոյ, որ Նախսահայկեան օրացուցային պատկերացումների համաձայն, հանդէս է գալիս տարեշրջանի աւարտին՝ հին եւ նոր տարիների սահմանին։

Կարելի է հայկական պատկերացումների հետ մի զուգահեռ էլ համարել եղջերուին խոցելը։ Սա էլ համապատասխանում է հայկական (եւ ոչ միայն հայկական) միջավայրում պահպանուած պատկերացումներին, համաձայն որոնց՝ ապատամբ (անհնազանդ) որսորդը պատժւում է աստծուն խոցելու փորձ արած լինելու համար։ Դիգենիսը պատժւում է, քանի որ խոցում է սրբազան եղջերուին։ Եւ այս եղջերուն էլ նշանակն է Հայր Աստուծոյ։ Մրան զուգահեռ էլ ունենք պատմութիւնը Հայկի մասին, որի ախոյեան թէլը պատժւում է Հայկի (իմա՝ Հայր Աստուծոյ) դէմ պատերազմած լինելու համար։ Թէլը փորձում է Հայկին (Հայր Աստուծուն) սպանել եւ ի հատուցումն այդ յանդգնութեան, խոց-

ւում-սպանւում է Հայկի անվրէպ նետով։ Նոյնի մի փոքր այլ տարբերակն է Բէլ-Նեբըովթի մասին հայկական աւանդութիւնը, ըստ որի՝ ամբարտաւանացած որսորդ Նեբըովթը նետ է արձակում երկինք՝ Աստծուն սպանելու միտումով, որին ի պատիժ՝ Աստուած շանթահարում, խոցում-սպանում է նրան։ Այսինքն, սա եւս խօսում է յօդուտ այս երգում եղջերու-Հայր Աստուած նշանակութեան։

Հայկական հնագոյն օրացուցային պատկերացումների եւ Դիգենիս Ակրիտասին վերաբերող իրադարձութիւնների միջնեւ կան նաեւ այլ ընդհանրութիւններ, որոնց այստեղ չենք անդրադառնայ. դրա համար հարկ կը լինէր խորանալ այդ հնագոյն օրացոյցի կառուցուածքային նրբութիւնների մէջ, որ, սակայն, դուրս է այս յօդուածի նպատակներից։

Այդուհանդերձ, նշուած ընդհանրութիւնները, կարծում եմ, բաւարար են՝ ընդունելու համար Հայոց հնագոյն օրացոյցի եւ Ակրիտեան դիցավիճակի միջնեւ եղած աղեքսների լրջութիւնը։

Այսպիսով, տեսնում ենք, որ Ակրիտեան այս երգերի մէջ նկարագրուած՝ Դիգենիս Ակրիտասի մահուան տեսարանը լիովին ներդաշնակ է հայկական հնագոյն տիեզերական-օրացուցային պատկերացումներին, որոնց հայաձայն տարին ունեցել է միայն 300 օր, դրան յաջորդել է 60-66 օրերի (այստեղ՝ 62 օրերի) արգելքների արտատարեկան շրջանը՝ կապուած գլխաւոր աստծու՝ Անդրաշխարհում լինելու հետ։ Մրան էլ յաջորդել է Հայր Աստծուն ձօնուած տօնը իր արարչական օրերով ու այդ աստծու աստղի առաջին առաւտեան ծագումով։

ԳՐԻԳՈՐ ԲՐՈՒԽԵԱՆ\*

\* ՀՀ ԳԱԱ. Վիկտոր Համբարձումեանի Տուն-Թանգարան, գ. Բիւրական, Արագածոտնի մարզ, 378433, ՀՀ, էլ. հասցե՝ gbrout@bao.sci.am

## The Concepts of The Oldest Armenian Calendar in Greek Epic Poem about Basil Digenis Akritas

(summary)

GRIGOR BROUTIAN\*

The famous medieval epic poem about Basil Digenis Akritas was formed in IX – X centuries in eastern regions of Byzantine empire with a great majority of indigenous Armenian population. Examining the poem and some older songs concerning Digenis Akritas, we found that the time concepts here are the same as we know from the oldest Armenian calendar: although the calendar cycle had the same duration as the tropical year, the year itself (the time of life) contains only 300 days. The remainder of the calendar cycle (60 - 66 days) was thought to be out of year, and this was a period of ban.

Such division of time was conditioned by mythological ideas concerning the life of main worshipped being (Father God with its heavenly image - the Orion constellation). Only the period of time when the star of the main worshipped being ( $\alpha$  Orionis) was visible in the sky was considered as the year, and it was considered that during this period the main worshipped being lives in the world. The period of invisibility of this star was about 60 – 66 days. It was assumed that during this period the main worshipped being was in the Dark (Underground) world, and for this reason it was omitted from the year and was a period of ban.

---

\* Viktor Hambartsumian Home-Museum, Byurakan, Aragatsotn, Armenia.  
E-mail: gbrout@bao.sci.am